ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 38-Լ «12» Օգոստոսի 2021

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻՈՆ ՄԱՏՅԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 26.7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի մարտի 16-ի N 26-Ն և 2021 թվականի օգոստոսի 4-ի N 36-Լ հրամանները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Տավուշի մարզի հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատությունների) 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում դասավանդողների տարիֆիկացիոն մատյանի կազմման առանձնահատկությունները՝ համաձայն Հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում տեղակայված Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների համար 2021-2022 ուսումնական տարվա տարիֆիկացիոն մատյան կազմելիս առաջնորդվել սույն հրամանով հաստատված Հավելվածով.
3. Առաջարկել Տավուշի մարզպետին՝

   1) հանձնարարել Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների համար 2021-2022 ուսումնական տարվա տարիֆիկացիոն մատյան կազմելիս առաջնորդվել սույն հրամանով հաստատված Հավելվածով.

   2) անհրաժեշտություն առաջանելու դեպքում՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ներկայացնել առաջարկություններ ֆինանսական վերաբաշխումներ կատարելու վերաբերյալ:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում գործող ոչ պետական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների համար 2021-2022 ուսումնական տարվա տարիֆիկացիոն մատյան կազմելիս առաջնորդվել սույն հրամանով հաստատված Հավելվածով.
5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

Նախարար՝ **ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**

8/11/2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

------ օգոստոսի 2021 թ N - Լ հրամանի

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2-ՐԴ, 5-ՐԴ, 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՏԱՐԻՖԻԿԱՑԻՈՆ ՄԱՏՅԱՆԻ ԿԱԶՄՄԱՆ

1. Սույնով սահմանվում են 2021-2022 ուսումնական տարվա ընթացքում Տավուշի մարզի ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում դասավանդողների տարիֆիկացիոն մատյանի կազմման առանձնահատկությունները:
2. Հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված ոչ միավորային (բնութագրային) և ձևավորող գնահատման գործիքակազմի ամբողջական փորձարկման և արդյունավետ ներդրման նպատակով Տավուշի մարզի ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների դրույքաչափը հաշվարկվում է հետևյալ կերպ.

1) 2-րդ դասարանում ուսուցչի 1 (մեկ) դրույքաչափը (շաբաթական 22 ակադեմիական ժամը) կազմված է շաբաթական 18 ակադեմիական ժամ՝ դասավանդվող ժամերից, և 4 ակադեմիական ժամ՝ գնահատման ժամերից, որի ընթացքում ուսուցիչն իրականացնում է սովորողների գնահատման համար անհրաժեշտ աշխատանքները,

2) 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում ուսուցչի 1 (մեկ) դրույքաչափը (շաբաթական 22 ակադեմիական ժամը) կազմված է շաբաթական 20 ակադեմիական ժամ՝ դասավանդվող

ժամերից, և 2 ակադեմիական ժամ՝ գնահատման ժամերից, որի ընթացքում ուսուցիչն իրականացնում է սովորողների գնահատման համար անհրաժեշտ աշխատանքները,

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված դասավանդվող և գնահատման ժամերի դրույքային հարաբերակցությունը ենթակա է պահպանման նաև ամբողջական դրույքից շեղումների դեպքերում:

3. Տավուշի մարզի 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների համար ուսումնական հաստատությունների տարեկան ժամաքանակները համապատասխանում են Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առավելագույն տարեկան ժամաքանակներին ՝ հետևյալ ձևով.

1) 2-րդ դասարան՝ տարեկան 928 ժամ,

2) 5-րդ դասարան՝ տարեկան 1190 ժամ,

3) 7-րդ դասարան՝ տարեկան 1190 ժամ,

4) 10-րդ դասարան՝ տարեկան 1360 ժամ:

4. Սույն առանձնահատկությունների 3-րդ կետում նշված առավելագույն տարեկան ժամաքանակներն ընդգրկում են պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչները, այդ թվում՝ ընտրովի բաղադրիչը:

5. Ընտրովի բաղադրիչի շրջանակներում 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարաններում ենթակա են ներառման նաև «Առողջ ապրելակերպ» դասընթացի խմբակը, 10-րդ դասարանում նաև «Մասնագիտական կողմնորոշման ակումբներ» ծրագրի գործունեությունը: Ընտրովի բաղադրիչի շրջանակներում ընդգրկվում են նաև նախագծային աշխատանքների ղեկավարումն ու իրականացումը:

6. 10-րդ դասարանում սովորողների մասնագիտական նախասիրություններն ու կողմնորոշումը զարգացնելու նպատակով, ի լրումն պետական պարտադիր բաղադրիչի, դպրոցական բաղադրիչի միջոցով ձևավորվում է անհատականացված դասացուցակ:

7. Անհատականացված դասացուցակի հիման վրա ձևավորվում են միևնույն առարկան միևնույն առարկայական ծրագրով ուսումնասիրող առանձին խմբեր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 30 օգոստոսի 2018 թվականի N 954-Ն որոշման 3 կետի: